# ՀԷՍՍԷՆԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

**ARMENISCHER KULTURVEREIN IN HESSEN e.V.**

Gegründet 1968
Gemeinnütziger Verein

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt

*Վարչութիւն*

Շրջաբերական 2016 / #3

Ֆրանկֆուրտ, 15.10.2016

**Սիրելի՛ միութենականներ և հայրենակիցներ,**

Հեսսէնի Հայ Մշակութային Միության վարչությունը սիրով Ձեր ուշադրությանն է ներկայացնում միության հետագա ծրագրերը.

2016թ. հոկտեմբերի 21-ին՝ ուրբաթ, ժամը՝ 19:30-ին



**<u>ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈ</u>**

Այս տարի մեր հյուրը կլինի գրող Ազատի Մկրտչյանը, ով կներկայացնի իր՝ Պարույր Սևակի ստեղծագործությունների գերմաներեն թարգմանությունները: Միջոցառման երաժշտական մասը կապահովի երիտասարդ շվիահար Արփի Նազարյանը:

**Հասցեն՝** Saalbau Gallus, Seminarraum 2, Frankenallee 111, 60326 Frankfurt:

2016թ. հոկտեմբերի 22-ին՝ շաբաթ, ժամը՝ 12:00-ին

**<u>ՖՐԱՆԿՖՈՒՐՏԻ՝ ԳՐՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԱՎԱՃԱՌԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ</u>**

Այս օրը մենք միասին կայցելենք Ֆրանկֆուրտի՝ գրքի միջազգային տոնավաճառին մասնակցող Հայաստանի տաղավարը: Հանդիպումը տոնավաճառի գլխավոր մուտքի մոտ: Միության հանդիպման վայրն այդ օրը կլինի փակ:

**Հասցեն՝** Halle 5.0, Stand C124, Messe Frankfurt:

2016թ. նոյեմբերի 19-ին, շաբաթ, ժամը՝ 16:30-ին





**<u>ՀԱՆԴԻՊՈՒՄ «ԿԼՈՐ ՍԵՂԱՆ»-Ի ՇՈՒՐՋ. ԼԵՈՆԻԴ ԱԶԳԱԼԴՅԱՆ</u>**

«Մեր մեծերը – Լեոնիդ Ազգալդյան»:
Փաստավավերագրական ֆիլմ՝ նվիրված Լեոնիդ Ազգալդյանի ծննդյան 74 ամյակին (22.11.1942): Անդրադարձ նրա գործունեությանը Հայաստանի անկախության և Արցախյան ազատամարտի տարիներին:

**Հասցեն՝** Միության հանդիպման վայր՝ Hamburger Allee 52a, 60486 Frankfurt:

* (հնարավոր են ծրագրի փոփոխություններ, հետևեք մեր ինտերնետային կայքին՝ **www.armenia.de**)

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Վարչութիւն*

Շրջաբերական 2016 / #3 Ֆրանկֆուրտ, 15.10.2016

Միության հանդիպման վայրը բաց է ամեն շաբաթ օր՝ 15:30-ից մինչեւ 19:00: Միության հայկական **շաբաթօրյա դպրոցի դասընթացները** շարունակվում են ժամը 15:30 - 18:00: Լրացուցիչ տեղի են ունենում նաև **ազգային պարի** դասընթացներ:

**Հեսսենի աշնանային արձակուրդի ժամանակ միության հանդիպման վայրը փակ կլինի:** Վերջին հանդիպումը նախքան արձակուրդը՝ շաբաթ, հոկտեմբերի 8-ին:
Առաջին հանդիպումը արձակուրդից հետո՝ շաբաթ, նոյեմբերի 5-ին:

**Միության հասցեն՝** Hamburger Allee 52a, 60486 Frankfurt am Main:

**--------- տեղեկություններ --------- տեղեկություններ --------- տեղեկություններ ---------**

**ՀՀՄՄ սուրբ պատարագները –** Այս դրությամբ ՀՀՄՄ հարմար եկեղեցի է փնտրում: Այս տարվա համար դեռ ծրագրվում է մեկ պատարագ: Կարևոր նորության դեպքում մենք Ձեզ տեղյակ կպահենք:

******

**2016թ. օգոստոսի 20-ից մինչև նոյեմբերի 6-ը – Երազային վայրեր. «Հայ մշակութային օրեր» Բեռլինի եվրոպական մշակույթների թանգարան:** Մանրամասն տեղեկություններ՝ http://www.deutscharmenischegesellschaft.de/2016/08/05/traumorte-armenische-kulturtage-im-museum-europaeischer-kulturen-berlin/

******

**2016թ. հոկտեմբերի 13-ից մինչեւ 23-ը – «Հայ Մշակութային Օրեր» Շտուտգարտում:** Մանրամասն տեղեկություններ՝ http://www.armenische-kulturtage-stuttgart.de

******

**2016թ. նոյեմբերի 20-ին ժամը 18:00-ին – «Հայաստան» ֆիլմի դիտում՝ Գերմանական Ֆիլմի Թանգարանում Ֆրանկֆուրտում:** Տոմսերը կարող եք ձեռք բերել հետևյալ համարով՝ 069-961220220: Թանգարանի հասցեն՝ Deutsches Filmmuseum, Schaumainkai 41, 60596 Frankfurt am Main: Մանրամասն տեղեկություններ ֆիլմի մասին՝ http://slowboatfilms.com/index.php?link=Armenia: